

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 27.11.2020թ. թիվ 2011930390 որոշումը անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<08>> 01 2021թ. 7-13

24

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վարդուհի Գասպարյանի ՄԴ/155508-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Փավստոս Բուզանդի փողոցի 101 շենքի 7 բնակարանի բնակիչ Վարդուհի Գասպարյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011930390 որոշումը՝ նշելով, որ Բաղրամյան պողոտայի փակ լինելու պատճառով կատարել է վերադասավորում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 60-րդ կետի համաձայն՝ եթե երթևեկելի մասը գծանշմամբ բաժանված է գոտիների, ապա տրանսպորտային միջոցների երթևեկությունը պետք է իրականացվի նշված գոտիներով: Ընդհատվող գծերը կարելի է հատել միայն վերադասավորվելիս:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011930390 որոշմամբ արձանագրված իրավախախտումն ամրագրած տեսանյութը հստակ ապացուցում է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 10.11.2020թ. ժամը 08:46-ին Երևան քաղաքի Մաշտոց – Սայաթ Նովա փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրած վայրում հատել է 1.1 հոծ գիծ գծանշումը 4 անիվներով ամբողջությամբ, որի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների մասին << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով:

Վարչական իրավախախտումների մասին << օրենսգրքի 124-րդ հոդվածի 35-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների համընթաց հոսքերն իրարից բաժանող «Հոծ գիծ» գծանշման պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված

վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցի առջևի երկու անիվներն ամբողջությամբ չեն հատել գծանշումը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել, ինչպես նաև այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Ինչ վերաբերվում է իրավախախտումը Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայի փակ լինելու պատճառով կատարված լինելու դիմումատուի պնդմանը, ապա այն արժանահավատ համարել հնարավոր չէ, քանի որ տեսանյութում առկա այլ տրանսպորտային միջոցներ շարժվում են Բաղրամյան պողոտայի ուղղությամբ՝ չխախտելով երթևեկության կանոնները, ինչը կարող էր կատարել նաև դիմումատուն:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սեփականության, քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (**դիտավորյալ կամ անզգույշ**) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-րդ մասի հատկանիշները, հետևաբար նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն օրինական է և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 27.11.2020թ. թիվ 2011930390 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Վարդուիի Գասպարյանին:



Ե.Կարապետյան